

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԱՅԺՄԵԱՅ ԻՍԿԱԿԱՆ ՔԻՒՐԴԻՍՏԱՆԸ

(Քիւրդ ցեղերը. Արաբական ազդեցութիւնը. կրօնապետների յարաբերութիւնը ցեղերու հետ. իրենց զբաղմունքը. կիսանկախ դուրսիւնն. միասարբ բնակչութիւնը. Օսմանեան պետութեան եւ Պարսկաստանի միջեւ Քիւրդ պետութիւն մը հիմնելու ձգտումը. Քիւրդերը Ասորիներու հանդէպ. Թիւրք հին ռեժիմը Քիւրդերու նպասակներուն անուղղակի քաջալեր:)

Այժմեայ իսկական Քիւրդիստանը կը տարածուի Պաղտատէն մինչև Մուսուլ, Ճուլամերիկ և էլ Ճըզլիքէ (*):

Բնակութեանց շրջաններն ու քաղաքներն են, Բէլէնտիւզ, Համամ—Ալի, Ճէպէլ—Հէմտի, Քէրքիւք, Ջըմլըմա, Սիւլէյմանիյէ, Մէմուրէթ իւլ Հէմաիյէ, Շէհրէզօր, Մէնտէլի, Մէրկես, Սիլահիյէ, Բանես, Հալէպէ, Քէօյսանջակ, Հօրման, Պանա, Սազըզ, Սէրտէշտ, Սօլուջպուլազ, Արպիլ:

Քիւրդ ազգաբնակութիւնը զուտ ամիոփուած է այս շրջանը, ուր չի գտնուիր ուրիշ ազգութենէ բնակութիւն: Այժմեայ իսկական Քիւրդիստանի մէջ կը բնակուին հետեւեալ ցեղերը.

(*) Քիւրդիստան կամ Քուրդիստան. Երկիր Առաջաւոր Ասիայի մէջ բաժնուած Պարկաստանի և Ասիական Թիւրքիայի միջև, գլխաւորապէս այն ամիոփ շրջանը որ կը գտնուի Տիգրիսի ձախ եզերքի և լեռներու կատարի միջև, որուն միւս զառիվայրը կերկարաձգուի Իրանի լեռնադաշտին վրայ, շատ խորտ ու փորտ երկիր մը, բայց շատ գեղեցիկ ու շատ լաւ ոռոգուած Գապուր (Khabour), Զապ ու ՏիալոՏ գետակներէ Տիգրիսի ձախը:

Այս հողը կը փոխարինէ հին Մետիպայն, մեծ մասով Ասորեստանին ու փոքրիկ մասով մը Հայաստանին:

«Nouveau Larousse Dict. Univ. Encycl.»